

Հաստատված է ՀՖՖ  
Գործադիր կոմիտեի  
2018թ. նոյեմբերի 29 -ի  
թիվ 7 նիստի որոշմամբ



2018-2019 Մրցաշրջանի

ՀՀ Ֆուտբոլի Բարձրագույն Խմբի Պրոֆեսիոնալ Առաջնության Անցկացման  
Կանոնակարգ

ԵՐԵՎԱՆ-2018

## Բովանդակություն

1. Կանոնակարգի խնդիրները .....	3
2. Մրցումների ղեկավարումը .....	3
3. Առաջնության մասնակից թիմերը, մուտքավճարները և հավաստագրերը.....	3
4. Խաղերի անցկացման վայրը .....	4
5. Առաջնության անցկացման կարգը .....	4
6. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգում .....	5
7. Խաղերի կազմակերպումը և ֆուտբոլիստների մասնակցությունը.....	5
8. Խաղային մարզահագուստ .....	7
9. Առաջնության խաղացանկը և անցկացման ժամկետները .....	7
10. Ակումբների պատասխանատվությունը .....	8
11. Հյուրընկալող ակումբի պարտականությունները .....	8
12. Խաղերի տեսագրում .....	9
13. Հասարակական կարգի և անվտանգության ապահովվումը .....	10
14. Առաջնության մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը.....	10
15. Պարզևատրումը .....	11
16. Չկայացած և անավարտ խաղերը .....	12
17. Թիմերի չներկայանալը խաղին կամ հրաժարվելը առաջնության հետագա մասնակցությունից , դրա հետևանքները.....	13
18. Թիմերի հեռացումը առաջնությունից .....	14
19. Բողոքներ և առարկություններ .....	14
20. Խաղերի սպասարկման իրականացումը և սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները .....	15
21. Վեճերի քննարկումը .....	16
22. Ակումբի (թիմի) անվանափոխությունը .....	16
23. Ակումբների մասնակցությունը Եվրագավաթներին .....	16
24. Այլ հարցեր .....	16
25. «Արդար խաղի» գնահատում .....	17

## 2018-2019 Մրցաշրջանի ՀՀ ֆուտզալի բարձրագույն խմբի պրոֆեսիոնալ առաջնության անցկացման կանոնակարգ

### Հոդված 1. Կանոնակարգի խնդիրները

- Նպաստել Ֆուտզալի զարգացմանը և մասսայականացմանը:
- Նպաստել ֆուտբոլիստների վարպետության մակարդակի բարձրացմանը:
- Նպաստել միջազգային մրցաշարերում ազգային հավաքականի և ակումբային թիմերի ելույթներին:
- Ստեղծել լիարժեք պայմաններ առաջնության մասնակիցների համար:
- Նպաստել «Արդար խաղի» սկզբունքների ամրապնդմանը:
- Դասակարգել մասնակից թիմերին ըստ առաջնության արդյունքների:
- Ի հայտ բերել մրցաշրջանի մրցանակակիրներին:

### Հոդված 2. Մրցումների ղեկավարումը

Առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՀՖՖ-ն՝

- հաստատում է առաջնության կանոնակարգն ու խաղացանկը,
- իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
- կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
- հաստատում է առաջնությունը սպասարկող մրցավարների և տեսուչների կազմը,
- ամփոփում է հանդիպումների արդյունքները,
- հաստատում է առաջնության արդյունքները և իրականացնում մրցանակակիրների պարգևատրումը,
- իրականացնում է կանոնակարգի պահանջներից, ՀՖՖ այլ փասթաթղթերից բխող այլ գործառույթներ:

### Հոդված 3. Առաջնության մասնակից թիմերը, մուտքավճարները և հավաստագրերը

1. Առաջնությանը կարող են մասնակցել ակումբները, մարզադպրոցները, տարածքային կառավարման մարմինները և բոլոր այն կազմակերպությունները /այսուհետ՝ ակումբներ/, որոնք ընդունում են

ՖԻՖԱ-ի, ՈԻԵՖԱ-ի, ՀՖՖ-ի հիմնարար սկզբունքները, պարտավորվում են կատարել սույն կանոնակարգի պահանջները, վճարում են մասնակցի մուտքավճարը:

2. Առաջնության մասնակցության մուտքավճարն է 110.000 /հարյուր տաս հազար/ դրամ:
3. Առաջնությանը մասնակցել ցանկացող ակումբները մինչև ա/թ նոյեմբերի 9-ը գրավոր ներկայացնում են սահմանված ձևի հավաստագիր, կից ներկայացնելով մուտքավճարի մի մասի՝ առնվազն 30.000 /երեսուն հազար/ դրամի՝ ՀՖՖ հաշվեհամարին փոխանցված անդորրագրի պատճեն:
4. Մուտքավճարի մնացած մասը վճարվում է մինչև թիմի մասնակիցների հայտավորման վերջնաժամկետը: Վճարման անդորրագրի պատճեն ներկայացվում է ՀՖՖ հայտավորման փաստաթղթերի հետ միասին:
5. Առաջնությանը մասնակցությունից հրաժարվելու կամ սույն կանոնակարգի պահանջների խախտման համար առաջնությունից հեռացվելու դեպքում մուտքավճարը հետ չի վերադարձվում:

#### **Հոդված 4. Խաղերի անցկացման վայրը**

1. Առաջնության մասնակից թիմերը մրցակցին ընդունում են համաձայն խաղացանկի՝ «Հավաստագրում» նշված մարզադահլիճում:
2. Խաղացանկի հաստատումից հետո հանդիպման օրը հետաձգելու, խաղն այլ մարզադահլիճ տեղափոխելու կամ խաղակազմի ժամը փոխելու անհրաժեշտության դեպքում փոփոխությունը նախաձեռնող ակումբը պարտավոր է գրավոր դիմել ՀՖՖ ոչ ուշ, քան նշված հանդիպումից 2 աշխատանքային օր առաջ:
3. Մարզադահլիճները պետք է ընդունված լինեն ՀՖՖ-ի կողմից: Մարզադահլիճի ընդունման գործընթացը պետք է ավարտվի առաջնությունը սկսելուց 15 օրացուցային օր առաջ:
4. Յուրաքանչյուր խաղին տվյալ մարզադահլիճի պատրաստ լինելը նախախաղային խորհրդակցության ժամանակ որոշում է խաղի տեսուչը՝ հիմք ընդունելով մրցավարի եզրակացությունը:

#### **Հոդված 5. Առաջնության անցկացման կարգը**

Առաջնությունը անցկացվում է 4 շրջանով (սեփական և մրցակցի հարկի տակ,) թիմերը միմյանց հետ հանդիպում են երկու անգամ սեփական և երկու անգամ մրցակցի մարզադահլիճում:

## **Հոդված 6. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգում**

1. Մրցաշարային աղյուսակում թիմերը դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Հաղթանակ՝ 3 միավոր, ոչ-ոքի՝ 1 միավոր: Պարտության դեպքում միավոր չի հաշվարկվում:
2. Երկու (և ավելի) թիմերի միավորների հավասարության դեպքում թիմերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը հավակնորդ թիմերի միջև խաղերում՝
  - վաստակել է ավելի շատ միավոր,
  - ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
  - խփել է ավելի շատ գոլ,
  - բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
  - բոլոր հանդիպումներում ունի ավելի շատ հաղթանակ,
  - վիճակահանությամբ:

## **Հոդված 7. Խաղերի կազմակերպումը և ֆուտբոլիստների մասնակցությունը**

1. Թիմերը և խաղը սպասարկող անձնակազմը պարտավոր են ժամանել մարզադահլիճ խաղից առնվազն 75 րոպե առաջ:
2. Յուրաքանչյուր խաղից 1 ժամ առաջ հանդիպման տեսուչի ղեկավարությամբ անցկացվում է նախախաղային խորհրդակցություն, որին մասնակցում են.
  - ա) հանդիպումը սպասարկող մրցավարը,
  - բ) մարզադահլիճի տնօրինության ներկայացուցիչը,
  - գ) մրցակից թիմերի ներկայացուցիչները,
  - դ) ոստիկանության ներկայացուցիչը(պարտադիր համազգեստով):Ոստիկանության աշխատակցի մասնակցությունը նախախաղային խորհրդակցությանը ապահովում է հյուրընկալող ակումբը:
3. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ, քան 35 րոպե առաջ խաղի մեքենայագրված ու ստորագրված արձանագրությունը, ինչպես նաև ֆուտբոլիստների ֆուտբոլային անձնագրերն ու պաշտոնյաների անձնական քարտերը հանձնել 3-րդ մրցավարին: Խաղից հետո քարտերն ու անձնագրերը վերադարձվում են:
4. Խաղի արձանագրությունում լրացվում է 5 հիմնական և առավելագույնը՝ 9 պահեստային ֆուտբոլիստների տվյալներ և առավելագույնը 5 պաշտոնյայի տվյալներ՝ նվազագույնը մեկ մարզիչ և մեկ բժիշկ: Արձանագրությունում

լրացված ֆուտբոլիստներից միայն 2-ը կարող են լինել օտարերկրյա ֆուտբոլիստ (լեգիոներ): Արձանագրությունում նշվում են միայն այն ֆուտբոլիստների և պաշտոնյաների տվյալները, որոնք հայտավորված են տվյալ թիմում և որակագրված չեն (որակագրված, տվյալ խաղին մասնակցող ակումբում չգրանցված, թիմում չհայտավորված, ինչպես նաև տվյալ խաղին ֆուտբոլիստի մասնակցությունն արգելող ցանկացած այլ դեպքում ակումբը պատասխանատվություն է կրում սույն Կանոնակարգի, ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի և այլ փաստաթղթերի համապատասխան):

5. Խաղին կարող են մասնակցել և տեխնիկական գոտում գտնվել միայն արձանագրությունում նշվածները:
6. Չհայտավորված, որակագրված, արձանագրությունում չնշված ֆուտբոլիստին խաղին մասնակից դարձնելու պատասխանատվությունը կրում է տվյալ ակումբը՝ անկախ ֆուտբոլիստի մասնակցության ժամաքանակից:
7. Թիմերի մարզիչները որպես ֆուտբոլիստ հանդես գալու իրավունք չունեն:
8. Առանց թիմի պաշտոնյայի խաղը չի անցկացվում, ինչպես նաև խաղի ընթացքում թիմի պաշտոնյայի հեռացման դեպքում, եթե տվյալ թիմը հանդիպման ընթացքում չունի արձանագրությունում նշված մեկ այլ պաշտոնյա, խաղը դադարեցվում է, և տվյալ թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն:
9. Առաջնությանը մասնակցելու իրավունք ունեն 17 տարին լրացած ֆուտբոլիստները: 16-ից մինչև 17 տարեկան ֆուտբոլիստները կարող են մասնակցել միայն մարզաթշկական դիսպանսերի (կենտրոնի) հատուկ թույլտվությամբ:
10. Խաղասկզբին թիմի բժշկի, ոստիկանության աշխատակիցների /համազգեստով/ բացակայության դեպքում խաղը չի անցկացվում: Խաղասկզբին ոստիկանության աշխատակցի ուշացման պարագայում, եթե հյուրընկալող ակումբը նախապես տեղեկացրել է ուշացման պատճառների մասին խաղի տեսուչին, խաղասկիզբը կարող է հետաձգվել ոչ ավել քան 20 րոպեով:
11. Երկու թիմերի կողմից վավերացված խաղի արձանագրությունները մրցավարին հանձնելուց հետո և մինչ սկզբնահարվածը փոփոխություն չի թույլատրվում կատարել բացառությամբ հետևյալ դեպքի.
12. Եթե արձանագրության մեջ նշված ֆուտբոլիստներից որևէ մեկն ի վիճակի չէ խաղը սկսել անսպասելի ֆիզիկական անկարողության պատճառով (վնասվածք), ապա նա (նրանք) կարող է (են) փոխարինվել միայն ակումբում գրանցված և հայտավորված այլ խաղացողով (ներով), ով (ովքեր) նշված չէ (չեն)

տվյալ խաղի արձանագրությունում: Սկզբնահարվածից հետո խաղի արձանագրությունում որևէ փոփոխություն կատարելը արգելվում է:

13. Վերը նշված դեպքում ՀՖՖ-ի պահանջով ակումբը պարտավոր է ներկայացնել համապատասխան բժշկական եզրակացություն:

#### **Հոդված 8. Խաղային մարզահագուստ**

1. Ֆուտբոլիստների մարզահագուստը պետք է համապատասխանի «ֆուտզալ խաղի կանոնների» պահանջներին:
2. Թիմերի բժիշկները, մերստողները պետք է լինեն մարզահագուստով: Այլ հագուստով խաղահրապարակ մտնելն արգելվում է:
3. Մրցող թիմերի մարզահագուստների գույները հաստատվում են մրցավարի կողմից՝ նախախաղային խորհրդակցության ժամանակ: Գույների համընկման դեպքում մարզահագուստը փոխում է հյուրընկալվող թիմը:
4. Մարզահագուստի վրա թույլատրվում է տեղադրել գովազդ, որը չի պարունակում քաղաքական, ռասայական, կրոնական տարրեր և կամ այլ կերպ չի խախտում գովազդի մասին ՀՀ օրենսդրության պահանջները ( հիշյալ դեպքերում ողջ պատասխանատվությունը կրում է ակումբը):
5. Ֆուտբոլիստներին արգելվում է խաղի ժամանակ կրել ցանկացած տեսակի զարդեղեն:

#### **Հոդված 9. Առաջնության խաղացանկը և անցկացման ժամկետները**

1. Առաջնության անցկացման ժամկետն է՝ 2018թ. դեկտեմբերի 1-ից 2019թ. հունիս 20-ը:
2. Առանձին դեպքերում հաստատված խաղացանկի խաղերի տեղափոխության իրավունքը վերապահված է ՀՖՖ-ին:
3. Առաջնության խաղացանկը ներկայացվում է թիմերին առաջնության մեկնարկից ոչ ուշ քան 7 օր առաջ:
4. Այն թիմերը, որոնք 2 և ավելի խաղացող են գործուղել ՀՀ ֆուտզալի ազգային հավաքական, իրավունք ունեն հանդիպումը հետաձգելու/տեղափոխելու համար գրավոր դիմել ՀՖՖ ոչ ուշ, քան հանդիպումից 2 աշխատանքային օր առաջ:

### **Հոդված 10. Ակումբների պատասխանատվությունը**

1. Ակումբները պատասխանատու են իրենց ֆուտբոլիստների և ողջ անձնակազմի գործողությունների համար:
2. Ակումբները պատասխանատու են իրենց թիմի երկրպագուների գործողությունների համար:
3. Ակումբները պարտավոր են վարել Ֆուտբոլիստների ստացած դեղին քարտերի հաշվառումը և Կարգապահական կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված պատժամիջոցների ի հայտ գալու դեպքում՝ ղեկավարվել դրանցով սահմանված պահանջներով (առանց կարգապահական կոմիտեի որոշման):
4. Ակումբները պատասխանատու են արձանագրությունում նշված ֆուտբոլիստներին և պաշտոնյաներին խաղին մասնակից դարձնելու համար: Արձանագրությունում նշվածները համարվում են խաղի մասնակից:
5. Ակումբների ղեկավարները պարտավոր են տարեկան առնվազն մեկ անգամ ապահովել իրենց ֆուտբոլիստների բժշկական հետազոտությունը:
6. Ակումբները պատասխանատու են կեղծ կամ ոչ հավաստի տեղեկություն ՀՖՖ-ին ներկայացնելու համար:

### **Հոդված 11. Հյուրընկալող ակումբի պարտականությունները**

Հյուրընկալող ակումբը պարտավոր է մարզադահլիճում ապահովել՝

1. Մրցավարների համար առանձնացված և անհրաժեշտ գույքով կահավորված սենյակ (տաք ջրով առնվազն մեկ լոգարանով, մեկ զուգարան, մեկ սեղան, չորսական աթոռ և կախիչներ):
2. Անհրաժեշտ սարքավորումներ խաղի ինֆորմացիոն սպասարկման համար՝ համակարգիչ և կրիչ: Նշված սարքավորումների բացակայության դեպքում խաղն անցկացվում է մեխանիկական անհրաժեշտ սարքավորումների օգնությամբ՝ ցուցատախտակ՝ տուգանային խախտումների միավորները ցուցադրելու համար, հատուկ ժամացույց /խրոնոմետր/, սակայն ակումբը տուգանվում է ըստ ՀՖՖ կարգապահական կանոնակարգի սահմանված հոդվածի:
3. Հնարավորության դեպքում տրամադրել խորհրդակցության սենյակ, դրա բացակայության դեպքում խորհրդակցությունն անցկացվում է մրցավարական սենյակում:
4. Մասնակից թիմերի համար կահավորված հանդերձարաններ (տաք ջրով, լոգարան, զուգարան)



5. Տրամադրել վնասվածք ստացած ֆուտբոլիստների խաղադահլիճից տեղափոխելու միջոց /պատգարակ/:
6. Հյուր թիմի երկրպագուների համար տեղեր տրիբունաներից մեկում (անհրաժեշտության դեպքում ` նաև առանձնացված):
7. Հյուր թիմի և սպասարկող մրցավարական խմբի համար թեյ, ջուր (միայն պլաստիկ տարաներով):
8. Հանդիպումն անցկացնելու համար առնվազն 3 գնդակ:
9. Դարպասացանցերի առկայությունը առաջնության խաղերի ժամանակ:
10. Մարզահատակը մաքրող առնվազն 1 անձի ներկայությունը:
11. Կողմնակի անձանց մուտքի արգելքը մրցավարական սենյակ, որտեղ գտնվելու իրավունք ունեն միայն հանդիպումը սպասարկող մրցավարական խմբի անդամները և տեսուչի կամ մրցավարի թույլտվությամբ արձանագրությունում նշված անձիք:
12. Բժշկի և ոստիկանության աշխատակիցների /համազգեստով/ ներկայությունը հանդիպմանը:

### **Հոդված 12. Խաղերի տեսագրում**

1. «Դաշտի տեր» ակումբը պարտավոր է իր խաղերը տեսագրել առնվազն մեկ բարձր որակի տեսախցիկով:
2. Մրցակից ակումբների կողմից օգտագործվող լրացուցիչ տեսախցիկ/ներ/-ի դիրք/եր/-ի ընտրությունը չի սահմանափակվում:
3. Խաղը պետք է տեսագրվի ամբողջությամբ, սկսված մրցավարների և թիմերի` խաղադահլիճ մուտք գործելուց մինչև նրանց խաղադահլիճից հեռանալը, այդ թվում խաղի ընթացքում տեղի ունեցող միջադեպերը ֆուտբոլիստների, ինչպես նաև երկրպագուների միջավայրում: ՀՖՖ ներկայացվող խաղի տեսագրությունը պետք է լինի ամբողջական և անընդմեջ` առանց որևէ ձևափոխման (մոնտաժի): Խաղերի տեսագրությունները պետք է ներկայացվեն ՀՖՖ մամուլի ծառայություն թվային (DVD) ձևաչափով ոչ ուշ քան մինչև խաղի հաջորդ աշխատանքային օրվա ժամը 17:00 (Տեսասկավառակի վրա պարտադիր հարկավոր է նշել տվյալ խաղին մասնակցող թիմերի անվանումները, խաղի հաշիվը, խաղի անցկացման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը): ՀՖՖ հասարակության հետ կապերի և լրատվության բաժնի հետ համաձայնեցնելով` ձայնագրությունների տրամադրումը հնարավոր է նաև համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ (ձայնագրությունը համացանցում վերբեռնելու կամ այլ տարբերակով):

### **Հոդված 13. Հասարակական կարգի և անվտանգության ապահովումը**

1. Մարզադահլիճում և անմիջական հարակից տարածքներում խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը և խաղից հետո հասարակական կարգի պահպանությունն ու անվտանգությունը հյուրընկալող ակումբը իրականացնում է իրավապահ մարմինների (ուստիկանների) միջոցով:

### **Հոդված 14. Առաջնության մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը**

1. Թիմերում հայտավորվել կարող են միայն այն ֆուտբոլիստները, ովքեր գրանցված են տվյալ ակումբում:
2. Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ըստ Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության կանոնակարգի:
3. Թույլատրվում է հայտավորել առավելագույնը 5 պաշտոնյա, որոնցից մեկը պարտադիր պետք է լինի բժիշկ և առավելագույնը 20 ֆուտբոլիստ:
4. Մասնակից թիմերի հայտավորման ժամկետը սկսվում է առաջնությունը սկսելուց 10 օր առաջ և ավարտվում է մեկնարկին նախորդող աշխատանքային օրը:
5. Հայտավորման ժամկետներից հետո փոփոխությունները թիմերում կատարվում են վերահայտավորման միջոցով հետևյալ ժամկետներում՝  
03.12.2018թ. - 14.12.2018թ., 23.02.2019թ. – 09.05.2019թ. վերահայտավորումը կատարվում է վճարովի՝ 5000 դրամ յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար:  
17.12.2018թ. - 22.02.2019թ. ժամանակահատվածում վերահայտավորումը կատարվում է անվճար:  
10.05.2019թ.-ից սկսած մինչև խաղաշրջանի ավարտը վերահայտավորումը արգելվում է:  
Ֆուտբոլիստների վերահայտավորումը սահմանաված ժամկետներից դուրս թույլատրվում է միայն.  
ա) արտասահմանից ժամանած ֆուտբոլիստներին, որոնց տրանսֆերային հարցումը ուղարկված է մինչև 05.05.2019 թվականը,  
բ) եթե վերահայտավորվող ֆուտբոլիստը գտնվում է զինվորական ծառայության մեջ: Տվյալ դեպքում ֆուտբոլիստի վերահայտավորումը կատարվում է անվճար:

6. Առաջնության ընթացքում ֆուտբոլիստները կարող են տեղափոխվել մեկ ակումբից մյուսը մեկ անգամ: Ակումբների պաշտոնյաները վերահայտավորվում են առանց ժամկետային և քանակական սահմանափակումների:

7. Ակումբը հայտավորման (վերահայտավորման) համար ներկայացնում է՝

- սահմանված ձևի, լրացված, ակումբի ղեկավարի կողմից ստորագրված և կնքված հայտավորման (վերահայտավորման) թերթիկ,
- վճարովի վերահայտավորման դեպքում գումարի փոխանցման /կանխիկ վճարման/ անդորրագրի պատճեն,
- հայտավորման թերթիկին կից պետք է ներկայացնել հայտավորվող ֆուտբոլիստների ֆուտբոլային անձնագրերը:

8. Ֆուտբոլիստի կամ պաշտոնյայի հայտից հանելը կատարվում է առաջնության ընթացքում՝ ակումբի ղեկավարի պաշտոնական նամակի հիման վրա:

9. Ակումբները հայտավորման փաստաթղթերը ՀՖՖ են ներկայացնում գրաֆիկով սահմանված օրերին: Հայտավորման գրաֆիկը խախտելու, ուշացնելու դեպքում նշանակվում է տուգանք՝ յուրաքանչյուր օրվա համար 3000 դրամ:

### **Հոդված 15. Պարգևատրումը**

1. Առաջնությունում՝

1.1 Առաջին տեղը գրաված թիմին շնորհվում է 2018-2019թթ. ՀՀ Ֆուտզալի բարձրագույն խմբի պրոֆեսիոնալ առաջնության հաղթողի կոչումը: Ակումբը պարգևատրվում է **6.000.000 (վեց միլիոն)** ՀՀ դրամով և դիպլոմով: Ակումբին է հանձնվում ՀՖՖ-ի փոխանցիկ Գավաթը: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, մարզիչները պարգևատրվում են ոսկե մեդալներով և առաջին տեղի դիպլոմներով:

1.2 Երկրորդ տեղը գրաված ակումբը պարգևատրվում է **3.000.000 (երեք միլիոն)** ՀՀ դրամով և ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, մարզիչները պարգևատրվում են արծաթե մեդալներով և երկրորդ տեղի դիպլոմներով:

1.3 Երրորդ տեղը գրաված ակումբը պարգևատրվում է **1.000.000 (մեկ միլիոն)** ՀՀ դրամով և ՀՖՖ-ի դիպլոմով: Թիմի ֆուտբոլիստները, ակումբի նախագահը, թիմի պետը, մարզիչները պարգևատրվում են բրոնզե մեդալներով և երրորդ տեղի դիպլոմներով:

1.4 Առաջին, երկրորդ և երրորդ տեղերը գրաված ակումբի բժիշկները, մերսողները, ադմինիստրատորները պարզևատրվում են ՀՖՖ-ի համապատասխան կարգի դիպլոմներով:

2. Փոխանցիկ գավաթը հանդիսանում է ՀՖՖ-ի սեփականությունը: Առաջնության հաղթող ակումբը պատասխանատու է փոխանցիկ գավաթի անվնաս պահպանության համար և պարտավոր է այն հետ վերադարձնել ՀՖՖ-ին հաջորդ առաջնության պարզևատրումից 10 օր առաջ, գերազանց անվնաս վիճակում: Գավաթի կորստի կամ վնասման դեպքում ակումբը պարտավոր է վճարել ՀՖՖ-ի կողմից սահմանվող տույժ, որը հաշվարկվում է գավաթի արժեքի տասնապատիկի չափով:

3. Առաջնության լավագույն ֆուտբոլիստը պարզևատրվում է հուշադիպլոմով և **300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամով:**

4. Առաջնության լավագույն խաղացողի քվեարկության իրավունք է տրվում մասնակից ակումբների նախագահներին, յուրաքանչյուր ակումբի մեկ մարզչի և ֆուտզալի կոմիտեի անդամներին:

5. Առաջնության լավագույն ռմբարկուն պարզևատրվում է «Ոսկե խաղակոշիկ» մրցանակով, հուշադիպլոմով և **300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամով:**

6. Առաջնության լավագույն մրցավարը պարզևատրվում է հուշադիպլոմով:

7. Առաջնության մասնակիցների համար ՀՖՖ նախագահի կամ գործադիր կոմիտեի որոշմամբ կարող են սահմանվել նաև այլ պարզևատրումներ:

### **Հոդված 16. Չկայացած և անավարտ խաղերը**

1. Անավարտ կամ չկայացած են համարվում այն խաղերը, որոնք ընդհատվել կամ չեն կայացել հետևյալ պատճառներով (ներառյալ, բայց չսահմանափակված)`

- արտակարգ իրավիճակների,
- լուսավորման համակարգի խափանման (անջատում), որը հնարավոր չի եղել վերականգնել 30 րոպեի ընթացքում,
- թիմի/երի/ խաղադաշտը լքելու,
- երրորդ անձանց միջամտության,
- խաղի մասնակիցների անվայել վարքագծի,
- հասարակական կարգի խախտման, որն էապես ազդել է խաղի ընթացքի և արդյունքի վրա,
- այլ հանգամանքներ:

2. Եթե խաղը չի կայացել կամ ընդհատվել է անկախ ակումբների կամ նրանց պատասխանատվության տակ գտնվող անձանց կամքից, ապա այն վերախաղարկվում կամ ընդհատման պահից շարունակվում է մեկ այլ օր, և դրա խաղացված մասի հաշիվը, կարգապահական տույժերը, փոխարինումները մնում են ուժի մեջ (պահպանվում են): Խաղի շարունակությանը մասնակցում են միայն այն ֆուտբոլիստները, ովքեր ընգրկված են եղել խաղի արձանագրությունում: Խաղի վերախաղարկման կամ անցկացման /շարունակման/ ժամկետի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը պատկանում է ՀՖՖ-ին:
3. Եթե սույն հոդվածում նշված խաղն ընդհատվելու (կամ չկայանալու) պատճառ է հանդիսացել ակումբի և վերջինիս որևէ պաշտոնատար անձի մեղավորությունը (դիտավորությունը), ապա տվյալ ակումբը ներկայացնող թիմին գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով, իսկ մրցակցին՝ հաղթանակ 5-0 հաշվով: Եթե մրցակցի առավելությունը հաշվի մեջ գերազանցում է 5 գնդակ, ապա խաղի հաշիվը մնում է ուժի մեջ: Եթե պատճառ է հանդիսանում մասնակից երկու ակումբների հավասար մեղավորությունը (դիտավորությունը), ապա երկու թիմերին էլ գրանցվում է տեխնիկական պարտություն 0-5 հաշվով:
4. Սույն հոդվածում նկարագրված դեպքերում գրանցված գոլերը ռմբարկուների հաշվարկում չեն ներառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցակցի առավելությունը ավելին է քան 5 գնդակը: Կարգապահական տույժերը մնում են ուժի մեջ:

**Հոդված 17. Թիմերի չներկայանալը խաղին կամ հրաժարվելը առաջնության հետագա մասնակցությունից, դրա հետևանքները:**

1. /Ակումբը/ թիմը համարվում է խաղին «չներկայացած», եթե չի տեղեկացրել ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել (տվյալ դեպքում հիմք է ընդունվում այն հանգամանքը, որ նախախաղային խորհրդատվությունից մինչև խաղասկիզբն ընկած ժամանակահատվածում թիմի ուշանալը (չներկայանալը բավարար է խաղը սպասարկող տեսուչի համար՝ ուշացած թիմին որակելու «խաղին չներկայացած»): Տեղեկացնելու դեպքում խաղասկիզբը կարող է հետաձգվել ոչ ավել, քան 20 րոպեով :
2. Թիմի մասնակցությունը կարող է կասեցվել կամ ակումբը հեռացվել առաջնությունից ՀՖՖ Գործկոմի որոշմամբ, եթե ակումբը պարբերաբար խախտում է սույն կանոնակարգը:

3. Եթե առաջնությունից հեռացված ակումբը մասնակցել է 50%-ից պակաս խաղերի, ապա խաղերի արդյունքները չեղյալ են համարվում: Հակառակ պարագայում անցկացրած խաղերի արդյունքները մնում են ուժի մեջ, իսկ (ակումբներին) թիմերին, որոնց հետ առաջնությունից հեռացվելուց հետո նշանակված խաղերը չեն կայանալու, գրանցվում է հաղթանակ՝ 5:0 հաշվով:

### **Հոդված 18 Թիմերի հեռացումը առաջնությունից**

1. Առաջնության ընթացքում թիմի երկու խաղի անհարգելի չներկայանալու դեպքում, թիմը հեռացվում է առաջնությունից:
2. Սույն հոդվածի դրույթները անհրաժեշտության դեպքում կիրառվում են նաև հոդված 16-ի կետ 3-ով նախատեսված դեպքերն ի հայտ գալու դեպքում:

### **Հոդված 19. Բողոքներ և առարկություններ**

1. Բողոքն ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը նպատակ է հետապնդում չեղյալ համարելու խաղի արդյունքը և վերախաղարկելու բողոքարկվող խաղը:
2. Բողոքը ընդունվում և գրանցվում է ՀՖՖ-ում, եթե ակումբի լիազորված անձը (Նախագահ, թիմի պետ, գլխավոր մարզիչ) խաղից հետո պաշտոնապես դիմել է տեսուչին՝ լրացնելով խաղի արձանագրության համապատասխան բաժինը:
3. Բողոքարկման ենթակա չեն մրցավարի կայացրած փաստացի որոշումները:
4. Առարկությունը ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը խաղը վերախաղարկելու նպատակ չի հետապնդում, և ուղղված է վերհանելուն, մեղավոր անձանց պատժելուն և հետագայում նման խախտումները բացառելուն:
5. Առարկությունները՝ կապված խաղադաշտի գծանշումների կամ դարպասների չափերի հետ, կարող են ներկայացվել միայն խաղի տեսուչին ոչ ուշ, քան խաղից 1 ժամ առաջ:
6. Բողոքները կամ առարկությունները ՀՖՖ ներկայացվում են ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա վերջը:
7. Բողոքը կամ առարկությունը քննարկվում են ՀՖՖ համապատասխան մարմնի կողմից՝ բողոքի դեպքում 30.000, իսկ առարկության դեպքում 10.000 ՀՀ դրամ վճարելուց (փոխանցելուց) հետո, մեկ շաբաթվա ընթացքում:
8. Բողոքի կամ առարկությանը կից ներկայացվում է վճարման (փոխանցման) անդորրագրի պատճեն:
9. Բողոքի կամ առարկության համար ՀՖՖ վճարված գումարը վերադարձվում է միայն բոլոր կետերով բավարարվելու դեպքում:

**Հոդված 20. Խաղերի սպասարկման իրականացումը և սպասարկող անձնակազմի անդամների գործառույթները**

1. Խաղերը կազմակերպելու և վարելու համար ՀՖՖ-ի մրցավարական բաժինը նշանակում է սպասարկող խումբը՝ մրցավար, 2-րդ մրցավար, 3-րդ մրցավար ժամանակաչափորդ և տեսուչ:
2. Մինչ նախախաղային խորհրդակցությունը մրցավարը և տեսուչը պարտավոր են ստուգել մարզադահլիճի վիճակը:
3. Խաղից առաջ, խաղի ժամանակ, ընդմիջմանը, խաղից հետո տեղի ունեցած արտառոց դեպքերի մասին մրցավարական խմբի անդամները պարտավոր են ՀՖՖ ներկայացնել զեկուցագրեր ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա 13:00-ն:
4. Վերոնշյալ երեք կետերով նախատեսված հիմքերով խաղի անցկացման վերջնական որոշումը կայացնում է մրցավարը:
5. Խաղի կազմակերպման ընդհանուր պատասխանատուն տեսուչն է:
6. Սույն կանոնակարգի հոդված 17-ի կետ 1-ում նշված դեպքերում, խաղասկզբի՝ մինչև երեսուն րոպե տեղափոխման և խաղի անցկացման վերաբերյալ, ինչպես նաև թիմին անհարգելի պատճառով խաղին չներկայացված համարելու վերջնական որոշումը կայացնում է տեսուչը:
7. Խաղի տեսուչի բացակայության դեպքում մրցավարը պարտավոր է փոխարինել նրան՝ կատարելով խաղի կազմակերպման, անցկացման և ավարտի հետ կապված տեսուչին վերապահված բոլոր գործառույթները:
8. Սպասարկող խումբը պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցները խաղն անցկացնելու համար:
9. Սպասարկող խմբին արգելվում է խաղի մեկնել (վերադառնալ) տվյալ խաղի մասնակից թիմերից որևէ մեկի հետ և իջնանել նույն հյուրանոցում (մարզաբազայում):
10. Նախախաղային խորհրդակցությանը ոստիկանության աշխատակցի չներկայանալու կամ ուշանալու դեպքում պատասխանատվությունը կրում է «Դաշտի տեր» ակումբը:
11. Խաղի արձանագրությունը, տեսուչի զեկուցագիրը, ինչպես նաև «Արդար խաղի» գնհատման արձանագրությունը ներկայացվում են ՀՖՖ ոչ ուշ քան հաջորդ խաղի աշխատանքային օրվա 13:00-ն:
12. Տեսուչը խաղի ընթացքում արտառոց կարգապահական խախտումներ արձանագրելու, ինչպես նաև խաղի վերաբերյալ բողոքարկման պաշտոնական հայտարարության դեպքում խաղից անմիջապես հետո կարող է հյուրընկալող

/դաշտի տեր/ ակումբի ղեկավարությունից պահանջել հանդիպման տեսագրությունը:

13. Տեսուչը պարտավոր է բողոքարկման մասին անմիջապես տեղեկացնել մրցակից ակումբին և ՀՖՖ մրցավարական բաժին:

#### **Հոդված 21. Վեճերի քննարկումը**

1. Ֆուտբոլային սուբյեկտների միջև ծագած վեճերը քննարկվում և վերջնական լուծում են ստանում ՀՖՖ-ում:

#### **Հոդված 22. Ակումբի (թիմի) անվանափոխությունը**

1. Ակումբի անվանման փոփոխությունը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության: Ակումբը պարտավոր է փոփոխությունը մեկամսյա ժամկետում գրանցման համար ներկայացնել ՀՖՖ՝ վճարելով 30.000 ՀՀ դրամ:
2. Առաջնության ընթացքում թիմի անվանման փոփոխությունը կատարվում է ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմումի համաձայն՝ 30.000 ՀՀ դրամ վճարելուց հետո: Թիմի անվանափոխությանը հաստատում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեն:

#### **Հոդված 23. Ակումբների մասնակցությունը Եվրագավաթներին**

1. ՀՀ Ֆուտզալի պրոֆուսիոնալ բարձրագույն խմբի հաղթողը իրավունք է ստանում մասնակցելու 2019-2020թթ. ՈՒԵՖԱ-ի Չեմպիոնների լիգայի գավաթի խաղարկությանը:

#### **Հոդված 24. Այլ հարցեր**

1. Սույն կանոնակարգի դրույթների խախտումների (չկատարման) համար կիրառվում են պատժամիջոցներ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական կանոնակարգի:
2. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև մրցաշրջանի ավարտը:



## Հոդված 25. «Արդար խաղի» գնահատում

1. «Արդար խաղի» մրցույթի նպատակն է արմատավորել «Արդար խաղի» սկզբունքները ֆուտզալում և հանդիպումները ֆուտզալ խաղի մասնակիցների և հանդիսատեսի համար վերածել իրական տոնի, ներկայացման, զվարճանքի:
2. «Արդար խաղի» գնահատումը կատարվում է առավել դրական քան բացասական տեսակետների հիման վրա, մասնավորապես՝
  - խաղի գրավչությունը,
  - հանդիսականների պահվածքը,
  - մրցակցի նկատմամբ հարգալից վերաբերմունքը,
  - մրցավարների նկատմամբ հարգալից վերաբերմունքը,
  - կարմիր և դեղին քարտերի քանակը,
  - թիմի պաշտոնյաների պահվածքը:
3. «Արդար խաղը» գնահատվում է տեսուչի կողմից՝ խորհրդակցելով մրցավարի հետ:
4. «Արդար խաղի» մրցույթի մասնակից թիմերի դասակարգումը կատարվում է ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի կողմից տարեկան մեկ անգամ՝ խաղաշրջանի ընթացքում վաստակած գնահատականների արդյունքով և հաստատվում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից: Իսկ միջանկյալ արդյունքները հրապարակվում են մամուլում յուրաքանչյուր շրջանի ավարտից հետո:

**ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ֆուտզալի բաժին**